

Հ Ր Ա Մ Ա Ն N 278-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«14» ՕԳՈՍՏՈՍԻ 2014 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 173-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետը և **ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.**

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2014 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից առաքվող գրությունների և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի և արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի հրամանների կազմման ուղեցույցները հաստատելու մասին» N 173-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետում «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության Նախագահին» բառերով:

2) Հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետում «Հայաստանի Հանրապետության մարզպետներին» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին, Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովներ, ծառայություններ, խորհուրդներ և այլն) ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարներին, քաղաքապետներին» բառերով:

3) Հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետում «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին» բառերով, «գործադիր մարմինների ղեկավարներին (նախարարներին)» բառերը՝ «Հայաստանի Հանրապետության նախարարներին» բառերով:

4) Հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետի «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալներին» բառերը հանել:

2. Հրամանի 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Սույն կետի 1-ին ենթակետում նշված մարմինների ղեկավարների տեղակալներին հասցեագրվող գրությունները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալի անունից:

3. Հրամանի 4-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) Քաղաքացիներին հասցեագրվող պատասխանների նախագծերը կազմվում են աշխատակազմի ղեկավարի անունից, բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանելու հանձնարարականը տրված է նախարարի տեղակալին կամ առանձնացված ստորաբաժանման ղեկավարին:

Եթե փաստաթղթերը հասցեագրված են առանձնացված ստորաբաժանումներին, պատասխան նախագծերը պատրաստվում են առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների կամ վերջիններիս փոխարինող անձի անունից և առաքվում քարտուղարության միջոցով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2014 թվականի հունվարի 23-ի N 14-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ներքին գործավարության կարգին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությանը, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը և նախարարության ենթակայության հիմնարկներին կամ կազմակերպություններին հասցեագրված դիմումները սահմանված կարգով հանձնվում են համապատասխան հիմնարկների կամ կազմակերպությունների, առանձնացված ստորաբաժանումների քարտուղարություն և պատասխան նախագծերը պատրաստվում

են տվյալ հիմնարկների կամ կազմակերպությունների ղեկավարների, քրեակատարողական վարչության պետի, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պետի կամ վերջիններիս կողմից պատասխանատու նշանակված անձի անունից:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները, նախարարության ենթակայության հիմնարկների ու կազմակերպությունների ղեկավարներն իրենց հասցեագրված գրություններին պատասխանելիս պետք է ղեկավարվեն սույն ուղեցույցի պահանջներով»:

4. Հրամանի 4-րդ կետի 4-րդ ենթակետից հետո ավելացնել նոր՝ 5-րդ ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝

«5) Սույն հրամանի 1-ին կետում նշված մարմինների ղեկավարներին և տեղակալներին հասցեագրված գրությունները կարող են պատրաստվել Հայաստանի Հանրապետության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության պետի կողմից՝ համապատասխանաբար «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքով և «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրենց վերապահված իրավասությունների շրջանակում:

5. Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայությունում ներքին փաստաթղթաշրջանառության առանձնահատկությունները սահմանվում են համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության պետի կողմից:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ